

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

«\_\_\_» «\_\_\_\_\_» 2017 թվականի N \_\_\_\_-Ն

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2016 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 29-Ի N 1313-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՅՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի դեկտեմբերի 29-ի N 1313-Ն որոշմամբ հաստատված Հավելված N 14-ի 3-րդ կետի 3-րդ ենթակետը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի դեկտեմբերի 29-ի «Հայաստանի Հանրապետության 2017 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» N 1313-Ն որոշման Հավելված N 11-ի Աղյուսակ N 11.16-ում կատարել փոփոխություններ և լրացումներ՝ համաձայն Հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՎԱՐՉԱՊԵՏ

Կ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

## ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2016 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 29-Ի N 1313-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ»

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

#### 1. Իրավական ակտի անհրաժեշտությունը (նպատակը)

Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի դեկտեմբերի 29-ի «Հայաստանի Հանրապետության 2017 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» N 1313-Ն որոշման Հավելված N 11-ում (ՀՀ 2017 թվականի պետական բյուջեի ոչ ֆինանսական ցուցանիշները) Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության (այսուհետ՝ Նախարարության) պատասխանատվությամբ իրականացվող բյուջետային ծրագրերի հավաստի արդյունքային ցուցանիշների արտացոլում:

#### 2. Ընթացիկ իրավիճակը և խնդիրները

Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի դեկտեմբերի 29-ի «Հայաստանի Հանրապետության 2017 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» N 1313-Ն որոշման Հավելված 11-ում Նախարարության պատասխանատվությամբ իրականացվող որոշ բյուջետային ծրագրերի արդյունքային ցուցանիշներ ճիշտ չեն արտահայտում ծրագրերի բովանդակությունը, քանի որ դրանց մի մասը իրականացման ընթացքում փոփոխություններ են կրել, մի մասն էլ 2017 թվականի բյուջետային հայտի ժամանակ ներկայացված ֆինանսական ցուցանիշներին համահունչ չեն:

Արդյունքում խնդիրներ են առաջանում հաստատված և փաստացի արդյունքների համադրման ժամանակ:

#### 3. Կարգավորման նպատակը և բնույթը

Սույն որոշման ընդունման նպատակն է Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի դեկտեմբերի 29-ի «Հայաստանի Հանրապետության 2017 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» N 1313-Ն որոշման Հավելված N 11-ում

Նախարարության պատասխանատվությամբ իրականացվող բյուջետային ծրագրերի հավաստի և ծրագրերի իրականացման ընթացքն ու բովանդակությունն արտահայտող արդյունքային ցուցանիշների հաստատումը:

#### **4. Նախագծի մշակման գործընթացում ներգրավված ինստիտուտները և անձինք**

Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության աշխատակազմը:

#### **Ակնկալվող արդյունքը**

Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության պատասխանատվությամբ իրականացվող բյուջետային ծրագրերի արդյունքային՝ հաստատված և իրական ցուցանիշների համապատասխանեցում:

**ՏԵՂԵԿԱՆՔ**

**«Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի դեկտեմբերի 29-ի N 1313-**

**Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին»**

**Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագծի ընդունման  
կապակցությամբ պետական բյուջեում ծախսերի և եկամուտների ավելացման կամ նվազեցման  
վերաբերյալ**

Սույն որոշման նախագծի հետ կապված պետական բյուջեում ծախսերի կամ եկամուտների փոփոխություններ նախատեսված չեն:

**ՏԵՂԵԿԱՆՔ**

**«Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի դեկտեմբերի 29-ի N 1313-**

**Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին»**

**Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագծի ընդունման  
կապակցությամբ իրավական ակտերում փոփոխություններ և լրացումներ կատարելու  
անհրաժեշտության վերաբերյալ**

Վերը նշված ՀՀ կառավարության որոշման նախագծի ընդունումն այլ իրավական ակտերի ընդունման անհրաժեշտություն չի առաջացնում և համապատասխանում է միջազգային պայմանագրերով ստանձնած պարտավորություններին:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2016 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 29-Ի N 1313-Ն ՈՐՈՇՄԱՆ  
 N 11 ՀԱՎԵԼՎԱԾԻ N 11.16 ԱՂՅՈՒՍԱԿՈՒՄ ԿԱՏԱՐՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐԸ**

**Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարություն**

Չափորոշիչներ	Ցուցանիշների փոփոխությունը (ավելացումները նշված են դրական նշանով, իսկ նվազեցումները՝ փակագծերում) ոչ ֆինանսական ցուցանիշներ տարի
<b>ՄԱՍ Գ: Նախարարի պատասխանատվության ներքո իրականացվող քաղաքականության միջոցառումների և ֆինանսական կառավարման արդյունքների ցուցանիշները</b>	
<b>1. Քաղաքականության միջոցառումներ</b>	
<b>1. Անմիջականորեն մատուցվող ծառայությունների արդյունքային ցուցանիշներ</b>	

Ծրագրային դասիչը		Մատուցվող ծառայության անվանումը	
1111	ԱԾ 05	Հանրակրթական և բարձրագույն ուսումնական հաստատությունների վարկանիշավորում	
		Նկարագրություն Հայաստանի Հանրապետության հանրակրթական և բարձրագույն ուսումնական հաստատությունների վարկանիշավորման իրականացում	
Քանակական		Դպրոցների թիվը	(11)
		Մատուցվող ծառայության վրա կատարվող ծախսը (հազար դրամ)	X
Ծրագիրը (ծրագրերը), որի (որոնց) շրջանակներում իրականացվում է քաղաքականության միջոցառումը			
1111 Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության ծրագիր			
Վերջնական արդյունքի նկարագրությունը Մրցակցային հանրակրթական և բարձրագույն կրթական համակարգի ապահովում			
Ծառայություն մատուցողի (մատուցողների) անվանումը «Կրթական տեխնոլոգիաների ազգային կենտրոն» ՊՈԱԿ			

**1.1. Ծառայություններ**

Ծրագրային դասիչը		Մատուցվող ծառայության անվանումը	
1045	ԱԾ 01	Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության և ուսուցման (ՄԿՈԻ) բարեփոխումներ	
		<u>Նկարագրություն</u> Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության ոլորտում կրթական չափորոշիչների և ուսումնական ծրագրերի մշակում, համակարգի մասնագետների վերապատրաստումների իրականացում	
Քանակական		Չափորոշիչների և գնահատման չափանիշների մշակում և վերանայում (հատ)	(3)
Քանակական		Մշակված և վերանայված չափորոշիչների համապատասխան ուսումնական և մոդուլային ուսումնական ծրագրերի մշակում և վերանայում	29
Մատուցվող ծառայության վրա կատարվող ծախսը (հազար դրամ)			X
Ծրագիրը (ծրագրերը), որի (որոնց) շրջանակներում իրականացվում է քաղաքականության միջոցառումը 1045 Նախնական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության ծրագիր			
<u>Վերջնական արդյունքի նկարագրությունը</u>			
Աշխատաշուկայի արդի պահանջներին, միջազգային չափանիշներին համապատասխան որակյալ և բարելավված մատուցվող նախնական /արհեստագործական և միջին մասնագիտական կրթական ծառայություններ			
Ծառայություն մատուցողի (մատուցողների) անվանումը «Կրթության ազգային ինստիտուտ» ՓԲԸ			

Ծրագրային դասիչը		Մատուցվող ծառայության անվանումը	
1114	ԱԾ 06	Սփյուռքի հայկական դպրոցների ուսուցիչների վերապատրաստում	
		<u>Նկարագրություն</u> Սփյուռքի հայկական դպրոցների ուսուցիչների վերապատրաստում	
Քանակական		Տարեկան վերապատրաստվող սփյուռքահայ ուսուցիչների թիվը	(120)
Մատուցվող ծառայության վրա կատարվող ծախսը (հազար դրամ)			X
Ծրագիրը (ծրագրերը), որի (որոնց) շրջանակներում իրականացվում է քաղաքականության միջոցառումը 1114 Սփյուռքի հայապահպանության ծրագիր			
<u>Վերջնական արդյունքի նկարագրությունը</u>			
Սփյուռքի գաղթօջախներում հայրենիքի և հայ ինքնության վերաբերյալ իմացության մակարդակի բարձրացում և հայապահպանության ամրապնդում			
Ծառայություն մատուցողի (մատուցողների) անվանումը Մրցույթի արդյունքում ընտրված կազմակերպություն			

Ծրագրային դասիչը		<u>Մատուցվող ծառայության անվանումը</u>	
1146	ԱԾ 121	Մանկավարժահոգեբանական աջակցության ծառայություններ	
		<u>Նկարագրություն</u> Երեխաների ֆիզիկական, մտավոր և (կամ) հոգեկան զարգացման առանձնահատկությունների բացահայտում և գնահատում	
Քանակական		Գնահատվող՝ ֆիզիկական, մտավոր և (կամ) հոգեկան զարգացման առանձնահատկություններով երեխաներ	(1800)
Քանակական		Գնահատման փուլերի թիվ	2
		Մատուցվող ծառայության վրա կատարվող ծախսը (հազար դրամ)	X
<u>Ծրագիրը (ծրագրերը), որի (որոնց) շրջանակներում իրականացվում է քաղաքականության միջոցառումը</u>			
1146 Հանրակրթության ծրագիր			
Վերջնական արդյունքի նկարագրությունը Հանրակրթական մակարդակում սովորողների ընդգրկվածության, գրագիտության և համակողմանի զարգացման բարձր մակարդակի ապահովում			
Ծառայություն մատուցողի (մատուցողների) անվանումը «Երևանի բժշկահոգեբանամանկավարժական գնահատման կենտրոն» ՊՈԱԿ			

Ծրագրային դասիչը		<u>Մատուցվող ծառայության անվանումը</u>	
1146	ԱԾ 117	Ռազմագիտության կաբինետները ուսումնառության նյութերով ապահովում	
		<u>Նկարագրություն</u> Ռազմագիտության կաբինետներին ուսումնական նյութերի, ցուցապաստառների և այլ պարագաների տրամադրում	
Քանակական		Ուսումնական տեսասկավառակներ	(7525)
Քանակական		Ռազմագիտական ուսումնադիդակտիկ ցուցապաստառներ	37338
		Մատուցվող ծառայության վրա կատարվող ծախսը (հազար դրամ)	X
<u>Ծրագիրը (ծրագրերը), որի (որոնց) շրջանակներում իրականացվում է քաղաքականության միջոցառումը</u>			
1146 Հանրակրթության ծրագիր			
Վերջնական արդյունքի նկարագրությունը «Նախնական զինվորական պատրաստում» հիմնական ծրագրերի աջակցություն			
Ծառայություն մատուցողի (մատուցողների) անվանումը «Գնումների մասին» ՀՀ օրենքի համաձայն ընտրված կազմակերպություն			



Ծրագրային դասիչը		<u>Մատուցվող ծառայության անվանումը</u>	
1146	ԱԾ 134	Դպրոցներում ոռոտատեխնիկայի զարգացման իրականացում	
		<u>Նկարագրություն</u> Դպրոցներում ոռոտատեխնիկայի խմբակների ստեղծում	
Քանակական		Ռոտատատեխնիկայի խմբակների թիվ	57
Քանակական		Ինժեներական խմբակների թիվ	103
		Մատուցվող ծառայության վրա կատարվող ծախսը (հազար դրամ)	X
<u>Ծրագիրը (ծրագրերը), որի (որոնց) շրջանակներում իրականացվում է քաղաքականության միջոցառումը</u>			
1146 Հանրակրթության ծրագիր			
Վերջնական արդյունքի նկարագրությունը Ծրագիրը հնարավորություն կտա աշակերտներին ուսումնասիրել մեխանիկայի, էլեկտրոնիկայի, ծրագրավորման և ոռոտատեխնիկայի հիմունքները. Աշակերտների մոտ կզարգանա ճարտարագիտական և համակարգային մտածողությունը, թիմային աշխատանքի ու համագործակցության ձգտումը			
Ծառայություն մատուցողի (մատուցողների) անվանումը «Ինսֆորմացիոն տեխնոլոգիաների ձեռնարկությունների միություն»			

Ծրագրային դասիչը		<u>Մատուցվող ծառայության անվանումը</u>	
1148	ԱԾ 31	Աջակցություն Հայաստանում ինտելեկտուալ խաղերի զարգացմանը	
		<u>Նկարագրություն</u> Աջակցություն Հայաստանում ինտելեկտուալ խաղերի զարգացմանը	
Քանակական		Մասնակիցների թիվ	550
		Մատուցվող ծառայության վրա կատարվող ծախսը (հազար դրամ)	X
<u>Ծրագիրը (ծրագրերը), որի (որոնց) շրջանակներում իրականացվում է քաղաքականության միջոցառումը</u>			
1148 Արտասուսումնական դաստիարակության ծրագիր			
Վերջնական արդյունքի նկարագրությունը Հանրակրթական ուսուցման համակարգում ընդգրկված երեխաների ֆիզիկական, հոգևոր և գեղագիտական զարգացում, բնապահպանական և կիարառական գիտելիքների ձեռքբերում			
Ծառայություն մատուցողի (մատուցողների) անվանումը «Գիտակների հայկական ասոցիացիա» ՀԿ			

**1.2. Տրանսֆերտներ**

Ծրագրային դասիչը		<u>Տրանսֆերտի անվանումը</u>	
1111	ԾՏ 06	Ուսանողներին զեղչային գներով հանրակացարանային պայմանների տրամադրում	
		<u>Նկարագրություն</u> Ուսանողներին հանրակացարանային պայմանների տրամադրում	
Շահառուների քանակը		Հանրակացարաններում բնակվող ուսանողների թիվը	(96)
Գումարը (հազար դրամ)			X
Շահառուների ընտրության չափանիշները			
Հանրակացարանում բնակվող ուսանողներ			
Ծրագիրը (ծրագրերը), որի (որոնց) շրջանակներում իրականացվում է քաղաքականության միջոցառումը			
1111 Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության ծրագիր			
Վերջնական արդյունքի նկարագրությունը			
Գիտելիքների տնտեսության և գիտության զարգացման արդի պահանջներին համապատասխան բարձրագույն և հետբուհական մասնագիտական որակավորում ունեցող մասնագետների պատրաստում			

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ  
ՂԵԿԱՎԱՐ

Վ. ՍՏԵՓԱՆՅԱՆ

**ԱՄՓՈՓԱԹԵՐԹ**

**«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2016 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 29-Ի N 1313-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ»  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ  
ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻՑ ՍՏԱՑՎԱԾ ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՈՒ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ  
ՀԱՇՎԻ ԱՌՆԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

Հ/ Հ	Առաջարկության հեղինակը, գրության ամսաթիվը, գրության համարը	Առաջարկության բովանդակությունը	Եզրակացություն	Կատարված փոփոխությունները
1	ՀՀ ֆինանսների նախարարության 20.11.2017թ. թիվ 01/9-2/21150-17 գրություն	Առաջարկություններ և դիտողություններ չկան:	Ընդունվել է ի գիտություն:	
2	ՀՀ արդարադատության նախարարության 30.11.2017թ. թիվ 01/14/21515-17 գրություն	Նախագծի նախաբանում անհրաժեշտ է կրճատ նշել ՀՀ կառավարության 2016 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 1313-Ն որոշման անվանումը՝ նկատի ունենալով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 39-րդ և 43-րդ հոդվածների պահանջները:	Ընդունվել է:	Կատարվել է համապատասխան փոփոխություն: